

Ս. Քուլանջյան

ՌՈՒՄԻՆԱԶԱՅ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Հայ պարբերական մամուլի, ինչպես նաև տպագրության պատմությամբ զբաղվող բանասերների աշխատություններում ցարդ ոչ մի ճշգրիտ տեղեկություն չկա ռումինահայ առաջին պարբերականի հրատարակման մասին: Ավելին, մեր գիտական որոշ հրատարակություններում տեղ են գրավել ոչնչով չհիմնավորված և իրականությանը չհամապատասխանող մի շարք տեղեկություններ: Այսպես, հանգուցյալ բազմալստակ բանասեր Գյուրեգին Լեոնյանը հայ պարբերական մամուլին նվիրված առաջին ծավալուն աշխատության մեջ նշում է, որ Ռումինիայի Գալաց քաղաքում 1892—1894 թթ. լույս է տեսել հայերեն և ռումիներեն լեզուներով «Արօր» շաբաթաթերթը, որ հրատարակել է Ղևոնդ քհ. Փափազյանը¹:

Նրկորորդ անգամ Գ. Լեոնյանը անդրադարձել է «Արօր»-ին 1904 թ. իր հրատարակած «Լիակատար ցանկ հայ լրագրության, ժամանակագրական կարգով (1794—1904)» հոդվածում, որտեղ նշվում է, որ «Արօր» ազգային և քաղաքական շաբաթաթերթը լույս է տեսել Գալացում Ղևոնդ քհ. Փափազյանի հրատարակությամբ և տեղի է 1892—1894 թթ. (այստեղ արդեն չկա հարցական նշան, որը կար լերոհիշյալ աշխատությունում: Ծան.— Ս. Բ.)²:

Պատմաբան Լեոն գրում է. «Գալաց քաղաքում Ղևոնդ քհ. Փափազյանը 1892-ին բաց է անում տպարան, տպագրում է օրացույցներ, գրքեր, հրատարակում է «Արօր» անունով մի շաբաթաթերթ»³:

Հայտնի բանահավաք Թևոդիկը իր «Տիպ ու տառ» աշխատության մեջ գեղեցիկ է «Արօր»-ի խմբագիր համարված Ղևոնդ քհ. Փափազյանի ընդարձակ կենսագրությունը, հիմնվելով անկասկած հիշյալ քահանայի կողմից իսկ ուղարկված ինքնակենսագրական տեղեկությունների վրա: Թե այդ կենսագրական տողերը իսկապես Ղ. քհ. Փափազյանի ձեռքով են գրված, ասացուցվում է այն անհերքելի փաստով, որ հիշյալ քահանայի այն կենսագրությունը, որը տարիներ հետո հրատարակվել է Ն. Մ. Պոտուրյանի կողմից, լրիվ կերպով համապատասխանում է Թևոդիկի հրատարակածին: Հրատարակողը քաղվածքներ անելով Ղ. քհ. Փափազյանի կենսագրությունից, գրում է. «Ինքնակենսագրությունը իր իսկ ձեռամբ գրված (իմա՝ Ղ. քհ. Փափազյանի կողմից

* Մի հատված՝ հեղինակի «Ռումինահայ պարբերական մամուլի և ռումինահայ ապագրության պատմություն» անտիպ աշխատությունից:

¹ Գյուրեգին Զիվանի Լիոնյանց, Հայոց պարբերական մամուլը, պատմական տեսություն և կարգից մինչև մեր օրերը (1794—1894), ընդարձակ ժանոթություններով, Ալեքսանդրապոլ, 1893, սյունակ 551—552:

² Գ. Լիոնյան, Լիակատար ցանկ հայ լրագրության, ժամանակագրական կարգով (1794—1904), «Լույս» պատկերազարդ օրացույց հանդես 1905, Թիֆլիս, 1904, սյունակ 607:

³ Լեո, Հայ գրքի տունը, Բ. տպ., Թիֆլիս, 1913, էջ 99:

զրված. ընդգծումը մերն է — Ս. Ք.) մեր տրամադրության ներքո է»¹։ Ուշագրության արժանի է այն փաստը, որ մեզ ծանոթ այս երկու ինքնակենսագրություններում էլ ոչ մի խոսք չենք գտնում հիշատակված «Արօր»-ի մասին։ Միայն իր հրատարակած կենսագրության վերջում իբրև հավելում Թեոդիկը նշում է.

«Լեռ այս քահանայի համար կը պրէ լի «Արօր» անուն շալաթաթերի մըն ալ հրատարակած է»²։

Հ. Ռ. Կարապետյանը ևս իր Վիեննայի Մխիթարյանների մոտ գտնվող հայերեն լրագրերին նվիրված աշխատությունում դարձյալ նշում է «Արօր»-ի անունը, ասելով, որ նա եղել է շալաթաթերի և լույս է տեսել Գալացում 1892 թ. (ընդգծումը մերն է — Ս. Ք.)։ Թերթի անվան տակ հրատարակողը նշել է՝ «Չունինք»³։

Ավելի ուշ Գ. Լևոնյանը իր «Հայոց պարբերական մամուլը» վերամշակված և ճոխացած աշխատությունում ղեկավարել է «Արօր»-ի նույնիսկ կլիշեն, հետևյալ վերտառությամբ⁴։

1 8 9 2

Ա Ր Օ Ր

Շալաթաթերի աղգալին և քաղաքական

Գալաց
1892—1894

Նմրագիր-հրատարակիչ
Հենդ Բ. Փափազյան
(Անտոն Ռշտունի)

Դ. Լևոնյանը, սակայն, չի նշում՝ ինքը այս թերթը տեսել է, թե ոչ։

Առաջին անգամ «Արօր»-ի հրատարակման ժխտողը եղավ բանասեր Հ. Մ. Պոտուրյանը, որը միայն անցողակի կերպով լակոնական երկու տողով նշեց, թե «Արօր»-ը թեև հայտարարված է եղել, բայց լույս չի տեսել⁵։

Եվ վերջապես այս բոլորից հետո, դարձյալ Գ. Լևոնյանը իր վերջին «Հայ դիրքը և տպագրության արվեստը» աշխատությունում անդրադառնալով ռումինական Գալաց քաղաքի հայ տպագրական կյանքին, կրկին խոսում է «Արօր»-ի հրատարակման մասին⁶։

Մեր պրատումները եկան ապացուցելու, որ «Արօր»-ը իսկապես որ լույս չի տեսել։ Եղած սխալ կարծիքները հերքվեցին հատկապես այն անաուարկելի տեղեկությամբ, որ մենք հանդիպեցինք հիշյալ թերթի խմբագիր համարված, ռումինահայ տպագրության վետերան, Ղ. քհ. Փափազյանի մտերիմ, ֆոկշանցի Պ. քհ. Մամիկոնյանի կողմից հրատարակված «Ռումանահայոց ներկայի և ապագայի» աշխատությունում։ Այդ գիրքը հրատարակվել է Ղ. քհ. Փափազյանի տպարանում՝ Գալաց քաղաքում 1895 թ., մի թվական, որը միայն

¹ Հ. Մ. Պոտուրյան, Հայ մամուլ, Բուխարեստ, 1936, № 36։

² Թեոդիկ, Տիպ ու տո, Կոստանդինուպոլիս, 1912—1913, էջ 143։

³ Հ. Ռ. Կարապետյան, Լիակատար ցուցակ հայերեն լրագրերի, որոնք կը գտնվին Մխիթարյան մատենադարանի մեջ ի Վիեննա 1794—1921, Վիեննա, 1924, էջ 13։

⁴ Դ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության «Կարգի միջև մեր օրերը» (1793—1934 թթ.), Երևան, 1934, էջ 31, կլիշե 224։

⁵ Հ. Մ. Պոտուրյան, Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 317։

⁶ Տես Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 242։

մեկ տարով ուշ է Գ. Առնյանի կողմից հիշատակված «Արօր» թերթի դադարումից: Պ. քհ. Մամիկոնյանն իր այդ դրքի վերջում ռումինահայերի «կորստամերձ վիճակը բարեշրջելու» առաջարկությունների շարքում անհրաժեշտ է համարում նաև հայկական մի շաբաթաթերթի հրատարակումը՝ Ռումինիայում: Նույն տեղում տողատակի ծանոթությունից երևում է, որ փորձ է արվել հրատարակելու «Արօր» անունով մի թերթ և այդ առիթով լույս է տեսել նաև մի հատարարություն, սակայն զանազան պատճառներով թերթը չի հրատարակվել: Թյուրիմացությունների տեղիք չտալու և այս հարցը վերջնականապես լուծելու համար՝ լրիվ մեջ ենք բերում Պ. քհ. Մամիկոնյանի տված հիշյալ ծանոթությունը:

«1892-ին Կալացի հոգևոր հովիվ Արժ. Տ. Առնյո քահանա Փափազյան տալյալ հայտարարություն մը հրապարակ հանած է ծանուցանելով թէ՛ կը ցանկա իմբողրական հանձնախումբով մը հայերեն և ռումաներեն մի շաբաթաթերթ հրատարակել «Արօր» անվամբ, ազգայնության գաղափարը Ռումանահայոց մեջ զարթուցանելու նպատակով. այս բարի փափագն այլ և այլ պատճառներով մարմնացում չէ գտած»¹:

Ինչպես տեսնում ենք, մինչև այժմ մամուլի պատմությանը նվիրված աշխատություններում առանց որևէ հիմքի իբրև ռումինահայության առաջին պարբերական համարվել է «Արօր»-ը, որը իրականում միայն հայտարարվել է, բայց լույս չի տեսել:

Ինչ վերաբերում է Ղ. քհ. Փափազյանի (1847—1930) տպագրական գործունեությանը, պետք է այստեղ ասել, որ նա Ռումինիայում ունեցել է հրատարակչական բեղմնավոր գործունեություն, Գալաց և Տուլչա քաղաքներում, տպավորելով բազմաթիվ դրքեր, գրքույկներ և նկարներ: Ղ. քհ. Փափազյանի՝ Գալացում հիմնադրած տպարանը ռումինահայ տպարանների պատմության մեջ հանդիսացել է երկրորդը, 1847 թ. Յաշում հիմնադրված ռումինահայ անդրանիկ տպարանից հետո:

Փափազյանի հրատարակչությունը կոչվում էր «Անի»: Անհրաժեշտ է նշել, որ «Արօր» շաբաթաթերթի հիմնադրման գործի ձախողումից հետո Ղ. քհ. Փափազյանը դարձյալ ձեռք չի քաշում հրատարակչական աշխատանքից. նա Գալացում 1895—1899 թթ. լույս է ընծայում փոքրածավալ ու այլազան քովանդակությամբ օրացուցային բնույթի իր շատ համեստ երկլեզվյան «Հայկական Տարեցույց»-ների շարքը, հայերեն նյութերին կից տալով նաև նրանց ռումիներեն թարգմանությունը: Այս գործում նրան աշխատակցում էին ռումինահայ հայտնի ուսուցիչներ և հրապարակախոսներ Լուսիկ Արմազաշյանը և փաստաբան Վահրամ Մամիկոնյանը: Աշխատակցել են նաև հայ և ռումինացի մի շարք գրողներ: Ղ. քհ. Փափազյանի սույն օրացուցային բնույթի տարեցույցներն էլ հենց հանդիսացել են ռումինահայերի պարբերական առաջին ճրատարակությունները: Բայց սրանց մասին ևս, զժբախտաբար, պարբերական մամուլի պատմությանը նվիրված հայտնի աշխատություններում որևէ տող չկա:

Ռումինահայ առաջին պարբերականը հանդիսացող հիշյալ տարեցույցը, որը լույս է տեսել 1895—1899 թթ. Գալացում 5 տարի շարունակ, ցավօք սրտի

¹ Պ. քհ. Մամիկոնյան, Ռումանահայոց ներկայն և ապագայն, Կալաց, 1893, ապ. Ղևնդ քհ. Փափազյան, էջ 194, տողատակի ծանոթություն:

մեզ ամբողջությամբ չի հասել: Մենք տեսել ենք 1896, 1898 և 1899 թթ. վերաբերող 3 տարեցույցները Բուխարեստի «Հայ մշակույթի տան» գրադարանում, իսկ 1895 և 1897 թթ. վերաբերող հատորները չենք տեսել:

Երևանի Պետական Մատենադարանի տպագիր գրքերի բաժնում, Ալ. Մյասնիկյանի անվան Պետական գրադարանի անձեռնմխելի ֆոնդում, ինչպես նաև էջմիածնի ճեմարանի գրադարանում չկարողացանք գտնել Ղ. քհ. Փափազյանի կողմից հրատարակված հիշյալ տարեցույցներից և ոչ մեկը: Սակայն, ինչպես երևում է Թիֆլիսի «Մշակ»-ում և էջմիածնի «Արարատ»-ում սույն տարեցույցների մասին գրված տողերից, նրանք ժամանակին ստացվել են, բայց չեն պահպանվել:

Ռումինահայ առաջին պարբերականի 1895 թ. լույս տեսած հայերեն և ռումիներեն երկլեզվյան տարեցույցի խորագիրը եղել է հետևյալը. «Հայկական տարեցույց 1895 թուականին Քրիստոսի և բուն թուականին Հայոց 4387—4388 և Տոմարական թուականին ազգիս ՈՅԽԴ—ՈՅԽԵ, 1344—1345: Խմբագրեալ ի տ. Ղևոնդ քահանայէ Փափազեան. թարգմանեալ ի Ռոմաներէն ծանօթութեամբ և գիտելեօք ի Լուսիկ Սրամազաշեանէ, երբեմն ուսուցիչ Նաշի Հայոց վարժարանին: Կալաց. Տպագր. Ղևոնդ քհ. Փափազյան»¹: Սույն տարեցույցի բովանդակության մասին մենք դադափար չունենք, քանի որ նրա հրատարակումը ավետող ծանոթ պարբերականները մեզ ոչինչ չեն հաղորդում, բացի նրա խորագրից:

1896 թ. «Հայկական տարեցույցը» մենք տեսել ենք, ժամանակակից մամուլը եւ հանգամանորեն խոսել է նրա մասին: 1896 թ. տարեցույցը տպագրվել է 1895 թ. վերջին, նրա ծավալն է 7,5×10 սմ և բաղկացած է եղել ավելի քան 230 էջից (մեր տեսած օրինակը վերջից թերի էր): Հայերեն նյութերին կից կա նաև նրանց ռումիներեն թարգմանությունը:

1896 թ. տարեցույցը բովանդակում է հետևյալ նյութերը.

- ա) ժամանակագրությունք երևելի անցից ինչ աշխարհի (էջ 6—21);
- բ) Եկեղեցական տոմար են. (էջ 22—27);
- գ) Համառօտ գիտելիք ի վերայ Տոմարին Հայոց (էջ 28—43);
- դ) Առ ընթերցողս (էջ 44—51);
- ե) Ս. հայր. Համառօտ նկարագիր Ս. էջմիածնի, գրված ֆոկլանցի Վ(ահհրամ) Մ(ամիկոնյան)ի կողմից (էջ 52—93);
- զ) Խրիմյան Հայրիկ. քանաստեղծություն գրված դարձյալ ֆոկլանցի Վահրամ Մամիկոնյանից (էջ 94—99), Հայրիկի նկարով:
- է) Համառօտագրությունք. Չորս եղանակք տարւոյ (էջ 100—101);
- ը) Գիտելիք ամսոց անուններուն վրայ և օրացույց (նաև տօնացույց և օղագուշակ) (էջ 202—վերջ):

1896 թ. սույն տարեցույցի մասին Թիֆլիսի «Մշակ»-ում մենք կարողում ենք հետևյալ ուշագրավ տողերը.

«Այս օրացույցի հետաքրքրական կողմերը շատ են: Ռումինիայի Գալաց քաղաքում, ուր ընդամենը 50 տուն հայ կա՝ հաստատված է տպարան, որ լույս է տնծայում խնամքով կազմված օրացույց: Ռումինիայում ապրող քոլոր հայերին մատչելի դարձնելու համար՝ օրացույցի բոլոր մասերը թարգմանված են

¹ «Հանդէս Ամսրեայ», Վիեննա, 1895, № 3, տե՛ս վերջի կողքը. և «Բազմավեպ», Վիեննա, 1895, № 2, էջ 95:

«Ռումիններն լեզվով... ժամանակագրության մեջ մտցված է Ռումինիայի սլատ-մոթյան գլխավոր անցքերը: Հայոց եկեղեցական տոմարի և տոների մասին սմփոփ տեղեկություններ տալուց հետո՝ Փափազյան քահանան խոստանում է ապագայում տալ օրացույցին կից և Հայոց պատմություն:

«Այա գալիս է էջմիածնի համառոտ նկարագիրը...

«Այդ բանաստեղծական ներբողը տպավորություն է թողնում իբրև տեն-չանքներ, իբրև հասկացողություններ՝ հեռու տեղ ապրող մի հայի, որ չի տեսել իրականությունը, այլ երևակայել է, կարոտել է, և հասկացողությունները, ավանդությունները երբեք չտեսած հայրենիքի մասին՝ դարձրել է սրտի ուխտ: Եվ ի հարկե իրավունք ունի...»

«Ըստ օրացույցի մասը կազմված է հմտությամբ, որտեղ մենք տեսնում ենք և ռումինական տոները (օրթոդոքս)»:

Մեր տեսած՝ 1896 թ. տարեցույցի օրինակը վերջից թերի լինելով, «Մշակ»-ում և «Արարատ»-ում նրան նվիրված տողերից ենք տեղեկանում, որ տարեցույցը վերջում ունեցել է նաև «Տեղեկություններ Ռումինիայում ապրող հայերի մասին... Կա և հայերեն պարբերական թերթերի ցուցակը»²:

1897 թ. տարեցույցի մասին մենք դեռևս լրացուցիչ տեղեկություններ չունենք:

1898 թ. տարեցույցը լույս է տեսել, բաղկացած 306 էջից. նրա ծավալը եղել է 7X11,5 սմ: Բովանդակությունը մեր բոլոր տեսածներից ամենաճոխն է: Տարեցույցի գրական հավելվածում, բացի հայագետ և ռումինագետ Լուսիկ Սրմապաշյանից և Վահրամ Մամիկոնյանից, աշխատակցել է այժմ մոռացված, հայազգի բանաստեղծ Բողդան Սրմաբըլը (գրական կեղծ անվամբ Վիկտոր Կողմին, ապրել է 1877—1903 թթ.):

Այդ բանաստեղծությունները հայերենի են թարգմանվել Վ. է.-ի կողմից (հավանաբար Վ. Մամիկոնյանի): Այնտեղ լույս է տեսել նաև ռումինացի գրող Պետրու Վուկանի «Հայուհին» բանաստեղծությունը: Տարեցույցի գինն է եղել թղթակազմ՝ 1 ֆրանկ, լաթակազմ՝ 1,50 ֆրանկ և ոսկեզօծ՝ 2 ֆրանկ:

Ղ. քհ. Փափազյանի Գալացի «Անի» տպարանում լույս տեսած վերջին տարեցույցը 1899 թ. է վերաբերում: Նա բաղկացած է 324 էջից, մեծությունն է 7,5X11,5 սմ: Տարեցույցը պատկերազարդ է: Օրացույցային բնույթի բազմաթիվ նյութերից բացի, հրատարակվել են նաև մի շարք բանաստեղծություններ, մեծ մասամբ գրված ֆոկլանցի Վահրամ Մամիկոնյանի կողմից: Կան նաև բարոյախոսական բնույթի ասացվածքներ, պիտանի գիտելիքներ, երգիծական մաս, և այլն. վերջում կա ծանուցումների բաժին:

Ռումինահայ առաջին պարբերականի հրատարակիչ Ղ. քհ. Փափազյանը, բացի Գալացում և Տոպչայում հրատարակած հայերեն լեզվով բազմաթիվ գրքերից ու գրքույկներից, նույն վայրերում լույս է ընծայել նաև մի շարք նկարներ՝ առավելապես վերցված հայ ժողովրդի պատմությունից, նպատակ ունենալով իրենց լեզուն մոռացած ռումինահայ գաղութի անդամներին ծանոթացնել մեր ժողովրդի պատմության կարևորագույն դրվագներին:

Ինչպես գաղութներում գործող հայ մշակներից շատ շատերը, այնպես էլ

¹ «Մշակ», Թիֆլիս, 30 հունվարի, 1896, № 12:

² Նույն տեղում. և «Արարատ», 1896, № 1, էջ 53:

ռումինահայ առաջին պարրերականի հրատարակիչ Ղ. քհ. Փափազյանը ասլրից նյութական շատ սուղ պայմաններում:

Միայն 1906 թ. ռումինահայերը ունեցան իրենց առաջին պարբերական թերթը, «Aurore» (Արշալույս) անունով: Նա լույս էր տեսնում Բուխարեստում ռումիներեն լեզվով, սակայն հայագիտական էր իր քննությունը: Խմբագիրն էր ռումինահայ հայտնի հրապարակախոս և մի շարք աշխատությունների հեղինակ Վ. Մեշտուճյանը: